

Խաչատրյան Վալենտին (ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԵՂՎՈՂ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐ Ղ. ՓԱՐՊԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Գրաբարյան շրջանից փոխանցված ձեռագրերում նկատվում են նաև ընդհանուր օրինաչափությունից շեղվող քերականական իրողություններ: Այն հիմնականում պայմանավորված է գրառվող ընդհանուր խոսակցական իրողություններին զուգահեռ նեղ բարբառային երևույթների գործածությամբ: Շատերն էլ հետևանք են հետագա դարերում ընդօրինակությունների ժամանակ տարածված ձևերի սպրդումների, ձեռագրերի աղճատման և զանազան այլ պատճառներով առաջացած սխալների:

Հոդվածներից մեկում անդրադարձել ենք Փարպեցու երկերում գոյակալանի հոգնակի թվի կազմության դրսևորումներին, նկատել գրաբարյան օրինաչափությունից զգալի շեղումներ¹: Գրաբարում գոյակալանի հոգնակի ուղղակալանի հիմնական կազմիչը *ք*-ն է, ուստի կարելի է կարծել, որ մյուս բոլոր հոգնակերտները խոսվածքային ներթափանցումներ են: Այս միտքն են արտահայտել մի շարք լեզվաբաններ, այդ թվում և Վ. Առաքելյանը: Ուշագրավ է հատկապես վերջինիս հետևյալ նկատառումը. «Եթե բոլոր հեղինակները *անի* մասնիկը կիրառեին, մենք կհամարեինք հիշյալ բառերին հատուկ հոգնակիացուցիչ մասնիկ, բայց այն հանգամանքը, որ դա հատուկ է միայն մի փոքր խումբ գրվածքների, ապա նշանակում է՝ դա բարբառային ներթափանցում է»²: Ի տարբերություն *ք* մասնիկով կամ նշվածով բաղադրված վերջավորություններով հոգնակիակազմության տարածված դրսևորումների՝ Գ. Ջահուկյանը մնացյալը համարում է «գրաբարի համար ոչ տիպական և բարբառներում, միջին հայերենում ու նոր գրական լեզվում տարածված հոգնակերտներ»³: Անշուշտ, չի բացառվում, որ հետագայում ձեռագիր ընդօրինակողներն են հին ձևերը կամա թե ակամա փոխարինել նորերով կամ իրենց բարբառներին հատուկ իրողություններով: Ահա բնորոշ օրինակներ՝ *-եան – արեղեան, բերդեան, գործեան, գրեան, թղթեան, հացկատակեան* (նաև *հացկատակք*), *մոզեան* (նաև *մոզք*), *-անի – ազատանի* (նաև *ազատք, ազատորեար*), *աւազանի, երիցանի* (նաև *երիցունք*), *նամականի, վնասանի* և այլ հոգնակերտներով բառաձևեր: Հատկանշական է,

¹ Վ. Խաչատրյան, *Գոյակալանի հոգնակի թվի կազմության առանձնահատկությունները* Ղ. Փարպեցու գործերում, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Ջ պրակ, Լինգվա, Ե., 2008, էջ 136-140:

² Վ. Առաքելյան, *Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության* (V դար), Ե., 1981, էջ 83:

³ Գ. Ջահուկյան, *Հին հայերենի հոյովման սիստեմը և նրա ծագումը*, Ե., 1959, էջ 220:

որ հոգնակերտ բազում մասնիկների շարքում Փարպեցին գործածել է նաև ժամանակակից հայերենում ընդհանրացած *-եր-ը՝ բաներ* «իրեր», *հարկեր, հայեր, ձեռներ*. քննական բնագրի այն հատվածը, որն ընդգրկում է Պատմության երկու *գրեան* օրինակները, համընկնում է Ն. Պողարյանի հայտնաբերած պատահական (1419 թ.), որում, ի դեպ, *գրենոյն* ձևի փոխարեն մի դեպքում *գրերոյն* է⁴, որն ավելի կարևոր փաստ է: Խիստ ուշագրավ է Ա. Այտընյանի՝ *-եր* հոգնակիակազմիչի վերաբերյալ հետևյալ դիտողությունը . «Այս աշխարհաբարի ձևը չէ թէ միայն չէ հայերենի մէջ, այլ նաև մեր մատենագրութեան սկզբանը հետ ժամանակակից է, և բառական տեղեր իւր հետքը թողուցած է՝ գլխաւորաբար Բ կարգի գրուածոց մէջ, դեռ սկզբնական *եար, երոյ, երով* ձևովը. իսկ Փարպեցին աւելի յառաջացած՝ միշտ ամփոփեալ ձևով *եր* յոքնակի կը բանեցընէ, որ իրմէ յառաջ հազիւ կը գտնուէր»⁵:

Փարպեցու գործերում նկատվում են քերականական այլ իրողություններ ևս, որոնք ընդհանուր օրինաչափությանը չեն պատկանում, ուստի, ամենայն հավանականությամբ, շատերը բարբառային հիմք ունեն:

Այտընյանը ուսումնասիրություններ կատարելիս օգտվել է Փարպեցու Պատմության առաջին հրատարակությունից, որն իրականացվել է 1793թ. Վենետիկում: Պարզվում է, որ այս հրատարակությանը հիմք է ծառայել 1774թ. Էջմիածնում Սիմեոն կաթողիկոսի պատվերով Մայր ձեռագրից ընդօրինակված տարբերակը: Իսկ այս վերջինը գիտական բնագրի հրատարակիչների հավաստմամբ սխալաշատ է⁶: Այսպիսով Այտընյանի փաստարկած մի շարք հոլովական դրսևորումների միայն մի մասն է ընդգրկված քննական բնագրում: Դրանք ընդհանուր օրինաչափությունից շեղված ձևեր են, ընդ որում՝ մի մասը թեքույթի առկայության դեպքում անհնչյունափոխ կամ հնչյունափոխված անսովոր ձևով, իսկ մնացածն՝ այլ թեքույթով: Այսինքն՝ դրանք հատուկ են ռակորենին, ինչպես նկատում է Այտընյանը: Քննական բնագրում առկա են՝ *թագաւորագնի* (փխ. *թագաւորագին*), *սերմունք* (փխ. *սերմանք*), *սեպուհեաց*, *վաճառու*, *յանգաստուոց*, *ատենաւ*, *տեղօք*, *բարով*: Այտընյանի թվարկած օրինակներում կա նաև *տեղաց*, որն առկա է Մայր ձեռագրում, բայց և գիտական բնագրում դարձրել են *տեղեաց*: Այս օրինակը բոլորովին կապ չունի *Տեղաց* հատուկ անվան հետ «ի Տեղացն անապատէ» (141), որ գրավել է Վ. Առաքելյանի ուշադրությունը, ուստի, ի հակադրություն Այտընյանի նկատած օրինակի, գրում է. «Իսկ ինչ վերաբերում է Տեղաց ձևին, սա հատուկ անուն է և չի կարող

⁴ Ն. Էպո. Պողարյան, *Նորագրուտ հատված Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան»*, Բանբեր Մատենադարանի, 1967(№ 8), էջ 266:

⁵ Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 79:

⁶ Ս. Մալխասեանց, 1904թ. հրատարակության «Յառաջաբան», էջ Ժ:

օրինակ ծառայել, որովհետև չենք կարող հաստատ պնդել, թե կապ ունի *տեղ* բառի հետ»⁷:

Ուսումնասիրությունները թույլ են տալիս Այտընյանին արձանագրելու, որ նույնիսկ 5-րդ դարից սկսած՝ ընդհանուր միտում է նկատվում միակերպ պարզ հոլովման՝ *ի, է, ուլ*, չնայած «դեռ բառական յառաջացած չ'երևար»⁸: Տողատակին փաստարկված օրինակներից Փարպեցու գործերում առկա են՝ *գանձի, ժողովրդով /ք/, հրամանով, հրովարտակով, նենգով, ընկերով /ք/*. կա նաև «ի մուլար *աղանդի*», որը, սակայն, սովորական է *n* հոլովման բառերի ներգոյականի իմաստն արտահայտելու համար, բայց միևնույն ժամանակ նման այլ դրսևորումների հետ միատեղ լուրջ կովան է *ի* թեքույթի հետագա տարածման: Այտընյանի վերոհիշյալ դիտողության օգտին կարող ենք ավելացնել Փարպեցու երկերից քաղված նաև այլ փաստեր.

Փարպեցու գործածած *գահող* օրինակը *գահեմ* «գարկել» բայի ենթակայական դերբայն է, սակայն ՆՀԲ-ում տրված է որպես գլխաբառ՝ «գործի գահելոյ, որպէս ազգ ինչ թակարդաց որսորդաց» գոյականական նշանակությամբ: Ենթակայական դերբայի համար ընդհանրական է *ի-ա* հոլովումը, սակայն հիշյալի գործիականը Փարպեցու երկում *ուլ/ք/* վերջավորությամբ է: Հավանաբար այս պատճառով է ներկայացվել որպես գլխաբառ՝ նկատի առնվելով, որ տեղի է ունեցել խոսքիմասային փոխանցում. «Իսկ թակարդացն շրջափակութեամբք... և *գահողովքն* ելեալ ի յորս գունդք նախարարացն...» (10):

Թև գոյականը, որ հիմնական իմաստից գատ նաև մի շարք այլ իմաստներով է դրսևորվել, այդ թվում և՝ «բանակի թև», *n* հոլովման է ենթարկվել, սակայն ուսումնասիրված երկում կանոնավոր *թևով* գործիականի հետ դրսևորվել է նաև *թևի* ձևով. «... յեղակարծումն անկեալք ի վերայ միոյ միոյ *թևի*՝ հանէին ընդ սուր զբազումս» (87), «ի կողման աջոյ *թևին*» (129):

Ի-ա և *n-ա* խառը հոլովումներով որոշ բառեր գործիականում գուգահեռաբար դրսևորվել են *-ով* վերջավորությամբ՝ *ի-ա՝ ընկերօքն - ընկերովքն, հրամանաւ - հրամանով, հրովարտակաւ - հրովարտակով, կարգաւ - կարգով, n-ա՝ մատանեաւ - մատանով, բարեաւ - բարօք - բարով. սիրելի բառի* հոգնակի գործիականի *սիրելեօք* կանոնավոր *ձևի* հետ նույնպես մեկ գործածությամբ կա *սիրելովք*. «...մարգպանն պարսիկ... կնաւ երթայ և որդւովք, դրամբ և *սիրելովք*» (177), չնայած որ վերջինս կարող էր աղերսվել նաև անցյալ դերբայի *սիրեալ/ք/* ձևից:

Ի, ի -ա հոլովումներով հայտնի *գունդ* «գորագունդ» գոյականի համար

⁷ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 206:

⁸ Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 77:

անօրինաչափ է *գնդով*։ «...պատրաստէր զինքն իւրով *գնդովն*» (72), որ Փարպեցին գործածել է բազում *գնդաւ* և երկու *գնդի* ձևերի հետ։

Հետաքրքրական փաստ է նաև այն, որ Մայր ձեռագրում առկա «իւրովք *ականջովք*» (161) կապակցության երկրորդ անդամը գիտական բնագրում ուղղել են *ականջօք*։ Թերևս պատճառն այն է, որ ևս երեք օրինակ կա այս վերջին ձևով, չնայած որ ՆՀԲ-ն վկայում է երկու դրսևորումների մասին էլ։

Մեր կարծիքով՝ ընդհանուր օրինաչափությունից շեղվող ձևերի կամ առհասարակ հոլովական բազմազանության առկայության պատճառներից մեկն էլ գրավոր խոսքն ավանդողների հետապնդած գեղագիտական նպատակն է. ինչպես կարելի է նկատել, վերոհիշյալներում գոյականներն առկայացել են *-ով* վերջավորությամբ՝ գործածվելով նույն բնորոշ մասնիկով իրացված *իւր* ստացական դերանվան հետ։

Առավել հետաքրքրություն է ներկայացնում այնպիսի բառերի *-ով* հոլովական վերջավորությամբ հանդես գալու հանգամանքը, որոնց հոլովման տիպը կախված է նրանց հնչյունական կազմից կամ ընդհանուր է այդ կարգի բոլոր միավորների համար, այսինքն՝ տվյալ բառերը բնորոշվում են ձևային հոլովման պատկանելությամբ։ Մրան է վերաբերում հետևյալ դիտողությունը. «Փարպեցին հանրահայտ *բարեաւ* գործիականը փոխարինել է նոր ժամանակների *բարով* ձևով, որ լեզվական ձևերի փոփոխման տեսանկյունից ավելի նշանակալից է, քան նախորդը (նկատի ունի *ղիւրով*), որովհետև հոլովման այս տիպը կայուն ձև ունի»⁹։

Դիւր բառի մակբայական կիրառությամբ գործիականի դրսևորումները նկատի ունենալով՝ հենց Փարպեցու առումով Վ. Առաքելյանը գրում է. «*Դիւրաւ* ճիշտ ձևի հետ ունի նաև *ղիւրով*։ Այս նույն բառը գտնում ենք նաև *ղիւրեաւ* ձևով, որը նույնպես ճիշտ չէ»¹⁰։ Այսպես. «...և ամենայն *ղիւրաւ* վճարի» (177) - «...*ղիւրով*... վճարես զգործ մի կարի մեծ» (121)։

Այսուհանդերձ, *ի*-ի անկման տեսանկյունից, ի հակադրումն գիտական բնագրի, ուշագրավ փաստեր է տրամադրում ոչ միայն մեզ քաջ հայտնի Մայր ձեռագիրը, այլև Ն. Պողարյանի հայտնաբերած պատատիկը։ Մայր ձեռագրում առկա են՝ *յոզոց* (յոզոց, 85), *որոյ* (որոյ, 147), Ն. Պողարյանի պատատիկում՝ *բարոյ* (264), *երանելոյ* (264, 272), *հոզով* (264), *եկեղեցոյ* (264, 266), *ասորոց* (265), *մանկտոյ* (266), *նախնոյն* (266, 272), *աւազանոյն* (268), *աւազանով* (272), *եղբարորոյն* (270), *զինով* (272), որոնք մի քայլ են հետագա համակարգային փոփոխության։

⁹ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 207։

¹⁰ Նշվ. աշխ., էջ 207։

Մինչդեռ շատ տարօրինակ է, որ, սրան հակառակ, ոչ *ի*-ով վերջավորվող *n* հոլովման բառերը Մայր ձեռագրում, բացառությամբ մի քանի պատահական դեպքերի, հատկապես *ւոյ*-ի են հանգած՝ *խորհրդւոյն* (19, 147), *մարդւոյ* (49, 179), *գիշերւոյն* (71, 120, 129 և այլն), *մարգարտւոյ* (88), *միայնւոյ* (126, 188), *գետւոյն* (134, 144), *սրբւոյն* (141, 75), *օղւոյն* (143), *սեղանւոյն* (203), *խնդրւոյն* (74), *այգետանւոյն* (74): Վերջինս ամենայն հավանականությամբ պայմանավորված է նրանով, որ գրիչը չիմացաբար կարծել է, թե գրաբարում առհասարակ ճիշտ են *-ոյ*-ի փոխարեն *-ւոյ* հանգով հոլովական ձևերը, ուստի և փորձել է ուղղում կատարել՝ հիմք տալով նման սխալ ձևերի:

Ինչ-որ առումով կարելի է սկզբնական համարել 1419 թ. պատառիկի փաստերը, մանավանդ որ նրանում իրար լրջորեն հակասող փաստեր չկան, ինչպես Մայր ձեռագրում վերոհիշյալներն են: Ավելացնենք նաև, որ *ի*-ով վերջավորվող բառերի նշյալ ձայնավորի անկումը մեր լեզվի բնականոն զարգացման արգասիք է՝ գուցե այն ժամանակ արդեն տարածված խոսակցական լեզվում և բարբառներում, ինչպես նկատում է Այտընյանը՝ ելնելով իր ձեռքի տակ եղած հրատարակություններում առկա մի քանի փաստերից:

Մյուս շեղումները հանգում են հետևյալին.

Ձայնավորասկիզբ բառերին, *ի* նախդրին լծորդ *յ*-ի կցումից բացի, հարադրվում է նաև նշված նախդիրը. «Եւս առաւել քան գոյնս դիպեալք *ի յաշխարհիս ի յայսմ*... վախճանեցան» (201), «իջեալ են *ի յամրոցացն*» (74), «Իսկ մի ոմն *ի յուխտապահացն* ասէ ցնոսա» (163), «Մեկուսացեալք *ի յԱստուծոյ* ուղղափառ ուխտեն» (192), *ի յազատաց* (151) և այլն: Պետք է հիշել նաև, որ ձայնավորասկիզբ բառերն ի հայտ են գալիս նաև *յ* նախահավելվածով՝ որպես ազատ տարբերակներ:

Փարպեցու գործերում նկատվում է եզակի ներգոյականի իմաստը սովորական *ի+տրականով* արտահայտելու փոխարեն *ի + հայցականով* արտահայտելու միտում. «Փախուցեալք ի սպանողացն՝ *ի թաքստոց* էին» (143), «...հրամայէր պահել... *ի դդեակ* շահաստանին Նիւշապուհ» (86, նաև. «... որք... *ի դդեկի* շահաստանին մնալոց էին ի կապանս», 93), «Եւ արգելեալ զինքն *ի սենեակ*՝ ողբոց միայն և արտասուաց լսէին ձայնս, մերձեալ ի դուրս սենեկին» (20), «... կալեալ զնա *ի գեօղն* որ կոչի Արծակ՝ տարեալ կապեցին ի միւսում ևս *ի գեօղ* յանուանեալ Բերդկունս» (61), «...ժողովեալ էին *ի վերնատունն*» (91), «Ընտրելագոյն էր ինձ, թէ բնաւ և ծնեալ իսկ չէր զիս մօր իմոյ *յայս աշխարհս*» (119, փխ. յայսմ աշխարհիս), «... որք *ի մոլար աղանդն* են քրիստոնէից» (88, նաև. «... որք *ի մոլար աղանդին* նոցա են եղեալ... », 88), «... ամբանայր *ի բերդն*» (292):

Այտընյանը նկատում է հետևյալը ևս. «Բաւական յաճախութեամբ կը

գտնուի նաև ընտանեկան ոճոյն մէջ՝ անորոշ հայցական կամ մանաւանդ ուղղական փոխանակ ներգոյականի՝ որոշեալ ժամանակ ցուցնելու համար»¹¹: Այսպէս. «... *ի ժամ* հաւուն ասելոյ հրաման տային...» (71), *ի ժամ* վախճանին (202):

Առկա են նաև առանց նախորդի դրսևորումներ. «... բայց առ *այս նուագ*՝ կամէի թէ ներէիք ինձ» (175), «Յորոց բազումք *այն ամ* յԱդուանս էին» (118), «Ի գիւղաքաղաքին, որ կոչի Արտաշատ, բանակէր *այն օր*» (144):

Այտընյանի դիտողությունները վերաբերում են նաև ուղղական և հայցական հոլովների միօրինակացման գործընթացին, որ հաստատվում են մատենագրական որոշ տվյալներով: Ուղղականի գործածությունը հայցականի փոխարեն Այտընյանի կարծիքով «նոյն ատենուան ռամկին աւելի սովորական կերպն էր»¹²: Այսպէս՝ «նոյնպէս անվնաս է Վահանն յամենայն իւր *իրքս*» (162), «Ընդէ՞ր կուրացեալ մտօք զկէս մասն անուանէք *աստուածք*» (փխ. *աստուածս*, 80), «Ի դրանն մարդկանէ դաւով *յարքունիքն* սատակեցին» (փխ. *յարքունիսն*, 90), «Այլ և ջրասուզակ, մամռախնդիր, խօզակեր *մեծանձունքն* և *յաղթամարմինք հաւքն* սնուցանէ» (10), «Եւ կատարեալ զամենայն *ասացեալքն* Նիխորայ» (65):

Ոչ միայն նկատելի է ուղղականի իրացում հոգնակի հայցականի փոխարեն, այլև հակառակն էլ է նկատվում. «Մին զհազարս հալածէ, *երկուս* զբիրս» (151), «...չէ սակաւ *ծախսն*» (177): Առաջինը ՆՀԲ-ում, *երկուք* ուղղականից բացի, թե՛ հայցական և թե՛ ուղղական նշումով է, իսկ երկրորդը բնագրային օրինակներում միայն հայցական հոլովի դերում է: Ենթադրելի է, որ նշված իրողությունները ևս առկա են եղել հնուց, այդպիսով և ընդհանրացել և փոխանցվել են արդի հայերենին:

Այտընյանը, նշելով, որ միջին դարերում ռամկական *ած* վերջավորությամբ անցյալ դերբայը հավանաբար գրաբարյան *ած* և *ուած* հանգով բայանուններից կամ էլ ածականներից է վերցրել այդ ձևը¹³, վկայում է, որ հին մատենագրության մեջ *ած* վերջավորությամբ իրական անցյալ հազիվ է նշմարվում՝ այդպիսիք համարելով «Բուզանդայ *շինածն* ու Փարպեցւոյն *ասացածը*», ապա ավելացնելով. «Գուցէ կրնայ *արարած* բառին ալ ածականօրէն բանածն ասոնց քովը դրուիլ: Աշխարհաբարին այս մասը վերջապէս ստուգութեան կարօտ կը մնայ»¹⁴:

¹¹ Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 109:

¹² Նշվ. աշխ., էջ 77:

¹³ Նշվ. աշխ., էջ 100-101:

¹⁴ Նույն տեղում, էջ 101:

Ահա Փարպեցու վկայությունը. «Շատ իսկ և բաւական լիցի քո տեանն բանն և լիով *ասացածն*» (167): Կարելի է ավելացնել նաև *թրքած* օրինակը. «Ի կրել արտաքս զաւելորդ *թրքած* մոխրոցացն»:

V դարից ավանդված և առավելագույնս աշխարհիկ լեզվական տարրեր պարունակող երկերում բայի ուսումնասիրությունը թույլ է տալիս Ա. Այտընյանին ասելու. «Բայերուն խոնարհմանց այլայլությունը կամ ռամկանալը դեռ բավական զգալի չէ այս դարուս մէջ»: Բայց և այնպէս, կան երևոյթներ, որ կարևոր խորհրդածոյթան տեղիք են տալիս, իսկ որոշ մասնավոր դեպքեր «մեզի մեր աշխարհաբար ձևերուն սկզբնական ժամանակները կը ցուցնեն»¹⁵:

Հսեմ անկանոն բայի անցյալ դերբայն է *լուեալ*, որով 150-ի հասնող վկայություն կա Փարպեցու աշխատություններում: Կասկած է հարուցում այս բոլորի հետ մեկ վկայությամբ *լսեալ* տարբերակը, որ, այնուամենայնիվ, կա Մայր ձեռագրում, որն էլ անցել է քննական բնագիր. «... *չլսեալ* բողոքոյն մերոյ՝ և կամէիք կորուսանել զմեզ» (173): *ճանաչեմ* անկանոն բայի անցյալ դերբայի համար էլ հայտնի է *ճանուցեալ* (131 և այլն), բայց Փարպեցին կազմել է նաև *ճանաչեալ*. «... զառաւել փառասէր աստուածատեաց խորհրդոց նորա *ճանաչեալ* զորոճմունս... » (61), «... յայտնապէս *ճանաչեալ*... զԱստուծոյ զօրութիւնն» (128). այս իրողոյթան առումով Վ. Առաքելյանը նկատում է. «Այս ձևը նույնպէս շատ կարևոր նշանակություն ունի լեզվի փոփոխման մեջ, որովհետև այս տիպի (*չ* ածանց ունեցող) բայերի դերբայի՝ նման փոփոխությունը գրաբարի բայական երկու հիմքերի ժամանակային հակադրությունը քանդում է»¹⁶:

Վերոհիշյալից զատ՝ խիստ հազվադեպ հանդիպում են և այլ դրսևորումներ, որոնք ուղենիշ են հետագա փոփոխոյթան, կամ գուցէ իսկապէս ռամկորեն են, որոնք պիտի լայն տարածում ստանային ապագայում. *տարայք* կանոնավոր հրամայականի փոխարեն Փարպեցին մեկ անգամ գործածել է *տարէք*, որ գործում է արդի գրական հայերենում. «Բայց որպէս հոգացեալ ինձամ *տարէք* ձեզ» (58). անսովոր խոնարհումով է՝ *կեցայք* (փխ. *կեցէք*). «... և ևս առաւել քաջաբար *կեցայք*, որ ապրեցայքդ և ի միջի էք» (172): Բայական մեկ այլ շեղում է՝ *սպանեցէք* (փխ. *սպանէք*). «... *սպանեցէք* զայնպիսի ճոխ կրականի» (սպանեցիք) (79):

Առավել ուշագրավ է Այտընյանի հետևյալ նկատառումը, որը վերաբերում է նաև Փարպեցու գործերին. «Հին ատեններէն միայն յիշեալ չորս կարգի գրոց մէջ երբեմն կը տեսնուի նոյն որոշումը. այսինքն *իք* փխկ. *էք*. և *այք* փխկ. *արուք*»¹⁷:

¹⁵ Նշվ. աշխ., էջ 92:

¹⁶ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 207:

¹⁷ Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 94:

Առաջինի առումով միայն երեք օրինակ է նկատվում, որոնցից երկուսը միևնույն նախադասության մեջ են. «Որք և զպատասխանիս ձերոց ընդ մեզ այդչափ բանից և սպառնալեաց *հրամայեցիք* առնել» (80), «...բայց դուք առաւել *ցուցիք* զսերն որ էր առ մեզ, զի գլխիտենական կենդանութիւնն մեր զմտաւ *ածիք* ծանուցանել մեզ և պարզնել» (54), բայց, սրան հակառակ, բազում օրինակներ կան - *էք* վերջավորությամբ՝ *մեծարեցէք* (175), *իշխեցէք* (78), *քննեցէք* (185) և այլն:

Տարածությունների վերաբերյալ Այտընյանը ի վերջո հետևյալ եզրակացությունն է կատարում. «Ստոյգ է որ բուն քաջ լեզուագիտաց ալ բերնէն կամ գրչէն հոս հոն իրական սխալ մը կրնայ սպրդիլ. սակայն ընդհանրապէս կը համարինք թէ այն նախնական ժամանակներուն մէջ ալ մատենագրական քերականութեան քով երկրորդ մ'ալ կար տիրող, - թէ արդեօք միայն կամ այն զաւառին մէջ, թէ առհասարակ ժողովրդեան մէջ՝ դեռ մեր դիտողութիւնները չեն հասնիր գոնէ հաւանական վճիռ մը տալու»¹⁸:

Այս, այդ, այն ցուցական դերանունների համար հայտնի են հոլովման կրկնակ ձևեր՝ կարճ և երկար: Միայն եզակի ոչ թեք հոլովներն են, որ միաձև են: Գոյականի հետ որոշային կիրառությամբ գործածվելիս դրսևորվում են թե՛ նախադաս և թե՛ հետադաս, ընդ որում, յուրաքանչյուր դեպքում ունենալով ձևային տարբերություն¹⁹: Կիրառական ընդհանուր օրինաչափություններից բացի՝ գրաբարյան մատենագրության մեջ գրանցվել են նաև որոշ շեղումներ: Մրանից անմասն չեն նաև դիտարկվող երկերը: Առաջադաս անհամաձայնության դեպքեր՝ այս երից բանիցս (160), յայս ուխտէս (47), յայս երից աշխարհաց յազատորերոյ (49), այն կրականուոյն (79), զայն տեղօք (60), յայն կողմանէ (72), յայն ժամու (133, նաև՝ յայնմ ժամու /60/, յայնմ աւուր/69/), այս վաստակոյս (16), այդ հրամանիդ (48):

Սոյն, դոյն, նոյն դերանունների որոշային կիրառության դեպքում օրինաչափ է հոլովական և թվային համաձայնությամբ նախադաս գործածությունը. միայն հոգնակի գործիականում է, որ թվային համաձայնություն տեղի չի ունենում: Սակայն առկա են անհամաձայնության հետևյալ դեպքերը՝ *նոյն զարդու* (92), *ի նոյն ազգէ*, *ի նոյն տոհմէ* (110): Ինչպես նկատում է Այտընյանը, «հին ընտանեկան լեզվի» տիրող ձևն է ցուցական և ստացական դերանունների նախա-

¹⁸ Նշվ. աշխ., էջ 98:

¹⁹ **Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ**, Երևանի համալսարանի հրատարակչություն, Ե., 2001, էջ 110-112:

դաս դրսևորումը, ինչպես նաև անհույժ թողնելը՝ հարևան անմասն ախարկա վիճակին²⁰: Այդպիսի կիրառություններ պարունակում են հետևյալ նախադասությունները. «Քաւ լիցի... *զիւ* հօտի զմուրեալ ոչխարն մատնել յայպանումն» (21), «Յամենայն սրտէ է *իւ* դարձիս կամք» (120), «... ի *քո* խրատուէ աւելի ևս կորեալ աշխարհն Հայոց» (99), « *Իւր* գաւառին այրընտիր ձիով աստ էր» (156), «... առ եզերքն Ղեկովք գետոյ արարեալ *զիւր* զօրու բանակատեղս» (3). «Այլ ի *մէր* երկպառակութենէ և ի նենգելոյ եղև մեզ վնաս» (137) և այլն:

Այլ անորոշ դերանունը սովորաբար նախադասվում է գոյականին և հոլովով ու թվով համաձայնում նրան՝ բացի հոգնակի ուղղական և հայցական հոլովների հետ գործածությունից, որի դեպքում ընդհանրապես մնում է եզակի: Փարպեցու աշխատություններում առավելապես պատահում են այնպիսի կիրառություններ, որ չեն համաձայնում: Այսպես՝ այլ փախստէիցն (130), այլ աւուրց (89), յայլ տոհմէն (82), յայլ ծառայէ (107) և այլն:

Սովորաբար ածականական միավանկ որոշիչը թե՛ նախադաս և թե՛ հետադաս կիրառության դեպքում համաձայնում է լրացյալին, ինչպես՝ *մեծի* զանձու (202), *զհնոյ* մարդոյն մեռելութիւն (179), բայց և առաջադաս գործածության պարագայում հիմնականում պատահում են անհամաձայնության դեպքեր, և սրանց համեմատությամբ բավական քիչ են նախորդները՝ *զմեծ* լուսաւորչէն Հայոց (203), *հին* մարդոյն (179) և այլն:

Սովորական է ժողովրդախոսակցական լեզվին հատուկ՝ ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը²¹: Օրինակ. «Իմաստս այս իմ և ջանս և արարուած երկուց իրաց առիթ է ինձ բարույ» (41), «Այս ևեթ խորհուրդ է խնդիր օր քան զօր աճէ ի սիրտս մեր» (98), «Ամենայն իրք Արեաց աշխարհիս աջող լինի և անսխալ» (61), «Մնացէ բանն և իրքն» (162) և այլն:

Այսօրնյանը իր ընտրած գործերում նկատում է առանձնակի միտում *նախդիր+հայցականով* տրականի իմաստն արտահայտելու փոխարեն ուղղակի տրականի գործածություն²²: Այսպիսի դրսևորումները ակնառու են նաև Փարպեցու երկերում: Այսպես. «Զբոլորս ցնդեմ օն և անդր ցիր և ցան արկից *ձորոցդ* և *դաշտացդ*» (152), «Իսկոյն երեկոյին *պաշտամանն* պատրաստէին» (89), «...նա կազմէր *յարձակմանն*» (151), «...հրաման տային *աղօթից* պարապելոյ» (89), «...այնպիսի մեծ *կրակի* իշխեցէք ձգել զձեռս ձեր» (78), «...փառս միայն և երկրպագութիւն մատուցանէին *ամենահնարին*» (131), «...կարող

²⁰ Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 106:

²¹ Նշվ. աշխ., էջ 106:

²² Նշվ. աշխ., էջ 107:

էին...վնասել...*ծուլացելոցն*» (69), «Լռեալք ի հարցանելոյ սուրբքն՝ *ճանապարհին* ուշադրէին» (76) և այլն: Ահա մի նախադասություն, որում առկա բազմակի անդամները միաժամանակ տրականով և *նախդիր+հայցականով* են. «...օրէնք իսկ մեր պատուիրեն հատուցանել *տերանց*, գղիպողսն և զարժանաւորս» (114):

Նկատված իրողություններից շատերն, անշուշտ, արտացոլում են ժամանակի կենդանի խոսակցական, մասամբ նաև՝ նեղ բարբառային ձևերը՝ հակադրվելով գրավոր մշակույթով հաստատվածներին: Ինչպես վերը նկատեցինք, առկա ձեռագրերն ու պատառիկները լեզվական մի շարք տարբերություններ են ցուցաբերում: Սա նշանակում է, որ գրչագրությունների ընթացքում գրիչների ձեռքով և ամենատարբեր պատճառներով զգալի փոփոխություններ են կատարվել: Քանի որ մեզ փոխանցված ամենահին ամբողջական ձեռագիրը պատկանում է 887 թ., ինչպես և բազում աշխատություններ նույնիսկ շատ ավելի ուշ դարերի ձեռագրերով են մեզ ավանդվել, և միննույն երկի ձեռագրային տարբերակներում էլ առկա է լեզվական բազմազանություն, իրարամերժ ու հակասական երևույթներ, այսպիսի պայմաններում անհնարին է գտնել սկզբնական ձևերը: Մեզ միայն մնում է մանրակրկիտ ուսումնասիրություններով վերհանել այն, ինչ հնարավոր է:

Хачатрян Валентин -Отклоняемые от закономерностей древнеармянского языка грамматические виды в произведениях Л. Парпеци – В данной статье изучены те грамматические виды, присутствующие в трудах Л. Парпеци, которые отклоняются от закономерностей древнеармянского языка. Это частично типы разговорного диалекта данного периода времени, а также новшества и ошибки, по каким-то причинам перешедшие в последующие века.